Կ Ա Ր Ծ Ի Ք

Գարեգին Սահակի Թումանյանի «Կիմերները և սկյութները Հայկական լեռնաշխարհի արևելքում (ըստ հնագիտական տվյալների)» Է.00.03 «Հնագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Աշխատությունը, ներկայացված պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման համար, բաղկացած է երկու մասից: Առաջինում ներածությունն է, տարբեր հարցերի քննությանը նվիրված հինգ գլուխ, եզրակացությունները, գրականության (595 անուն աշխատանք) ցանկը և համառոտագրությունների ցուցակը (ընդհանուրը՝ 294 էջ), իսկ երկրորդում՝ հեղինակի կազմած քարտեզը, նկարներ, գրչանկարների աղյուսակներ, ինչպես և ընտրված հատկանիշների ու վիճակագրական տվյալների տախտակներ (ընդհանուր աշխատանքը՝ 407 էջ):

Ներածությունում հիմնավորվում է թեմայի արդիականությունը, առաջադրված նպատակներն ու խնդիրները, գնահատվում՝ նախորդների կատարած աշխատանքները, ներկայացվում է ուսումնասիրության մեթոդական հիմքը, աշխատանքի գիտական նորույթը: Ատենախոսը ընդգծում է Հայկական լեռնաշխարհի մշակույթների շարքում իր իսկ կողմից շրջանառության մեջ դրված «կիմերա-սկյութական մշակութային ընդհանրության» ունեցած տեղի և դերի պարզաբանման, գրեթե չլուսաբանված հիմնախնդիրը հետազոտելու անհրաժեշտությունը: Իրավացիորեն ընդգծվում է, որ դա կօգնի մթա. VIII դ. վերջ – VI դ. երրորդ քառորդն ընկած պատմական իրավիճակը ամբողջությամբ պարզաբանելուն և վաղ հայկական մշակույթում էթիունյանին և բիայնականին զուգահեռ , կիմերա-սկյութական բաղադրատարրի կատարած դերը վեր հանելուն: Առաջադրված խնդրի իրագործումը պահանջում է ոչ միայն մշակութակազմիչ համալիրների լիարժեք ներգրավում, այլև՝ հնագիտական նյութերի քննությամբ ստացված արդյունքների համադրում գրավոր աղբյուրների կցկտուր տեղեկությունների հետ. Դա թույլ կտա ստանալ պատմական իրավիճակի գրեթե ամբողջական պատկերը:

Առաջին գլխում, որը բաղկացած է երեք մասից, ատենախոսը ներկայացնում է կիմերներին և սկյութներին վերաբերող պատմական տեղեկությունները: Վերջիններիս շարքում առաջնայինը սեպագիր աղբյուրներն են. դրանց հեղինակները, վաղ շրջանում Հայկական լեռնաշխարհ և հարակից շրջաններ ներխուժած կիմերների և սկյութների ծավալած գործողությունների ականատեսներն են եղել:

Համերաշխվելով նախորդ հետազոտողների հետ, ատենախոսը ևս, Պարտատուայի ետևում տեսնում է Պարույրին, իսկ Շագապուտարա/Իշպակային կապում է Սկայորդու (սակ տոհմից) հետ (էջ 24-25):

Ատենախոսը չի շրջանցում նաև Գիրք Ծննդոցի Ասքանազի ու Թորգոմի՝ Գոմերի (կիմեր) որդիներ լինելու վկայությունը, որին անդրադարձել են և հայ պատմիչները: Ատենախոսը ոչ միայն նրանցից համապատասխան մեջբերումներ է կատարում, այլև՝ առաջ գնալով փորձում է դրանք համադրել հնագիտական նյութերի և տեղագրական տվյալների հետ: Պատահական չէ, որ նրա ուշադրության շրջանակում է հայտնվում 1979 թ. լույս տեսած Ի. Պյանկովի աշխատության (К вопросу о путях проникновения ираноязычных племен в Переднюю Азию) այն միտքը, որը շեշտում է կասկերի տարածքի համընկնումը մթա. I հազ. կիմերների տարածքին: Ատենախոսը չի բացառում նաև կատակոմբները կիմերների հետ կապելու հնարավորությունը (էջ 41):

Հանգամանալի են ներկայացված կիմերների ու սկյութների վերաբերյալ հույն հեղինակների տեղեկությունները: Ավելորդ է կրկնել, որ այս դեպքում ևս, ատենախոսը շարադրում է այդ տեղեկություններին վերաբերող, նախորդ հետազոտողների (Ի. Մ. Դյակոնով, Բ. Բ. Պիոտրովսկի, Ա. Ա. Իեսսեն և այլոք) կողմից արտահայտված կարծիքները:

Ատենախոսության երկրորդ՝ «Հայկական լեռնաշխարհի արևելյան հատվածի դամբանախմբերը, որոնք կարելի է վերագրել կիմերա-սկյութական մշակութային ընդհանրությանը» վերնագիրը կրող գլուխը կազմված է երեք բաժնից: Դրանցում համապատասխանաբար քննվում են կիմերա-սկյութական մշակութային ընդհանրությունը ներկայացնող այն դամբարանները, որոնցում ամփոփված հիմնական ննջեցյալները (հեծյալ) ռազմիկներ են, որոշ դեպքերում կատարված տեղականին օտար դամբանային կառույցներում: Քննվում են դամբանների ընտրության սկզբունքները, ընտրված հատկանիշների համատեքստում տրվում է որոշ դամբանների մշակութային պատկանելության նոր մեկնաբանությունը, մատնանշվում ընդհանրության հատկանիշներով դամբանախմբերը: Կազմված են հատկանիշների ցանկերը, որոնք նույնական չեն դամբանային և բնակելի համալիրների համար. Դրանք ներկայացված են «ընտրված հատկանիշների բաշխման ամփոփիչ» և «վիճակագրական» աղյուսակների տեսքով: Առանձնացված հատկանիշներից շատերը հաճախ են հանդիպում Կովկասից հյուսիս տարածված համալիրներում, մինչդեռ մյուսները սովորական լինելով բիայնական, էթիունյան և այլ փակ համալիրների համար, ցույց են տալիս «առաջնային» և

«երկրորդական» հատկանիշները առանձնացնելու անհրաժեշտությունը: Ատենախոսը գտնում է, որ մշակութային պատկանելության հավաստիությունն ապահովելու առումով բավարար են կիմերա-սկյութական թաղումների հատկանիշներից երեքը, այդ թվում առնվազն մեկը՝ բնորոշիչ («առաջնային»): Ըստ իս, իրավացի է հեղինակը մատնանշելով, թե քննության նման եղանակը թույլ կտա հստակեցնել ոչ միայն մշակութային պատկանելության խնդիրը, այլև՝ համալիրի կազմավորման ժամանակագրական միջավայրը (էջ 67): Էական է այն դիտարկումը, թե առանձնացված հատկանիշները վերջնական չեն. դրանք կարելի է ավելացնել: Հակագիտական է որոշ նյութերի միտումնավոր անտեսման միջոցով «երիտասարդացնել» համալիրները:

Աշխատանքի երրորդ գլխում, որը կազմված է չորս բաժնից, քննվում են տարածքի կիմերա-սկյութական մշակութային ընդհանրության հատկանիշներով դամբարանները: Բաժիններից առաջինում ուսումնասիրվում են թաղման ձևի, կառույցի, ծիսակարգի, զոհաբերությունների բնորոշ տիպերը (մեջքի պառկեցված, դիակալներ, մահարձանի առկայություն և այլն), երկրորդում՝ թաղման գույքը (ձիասարք, զենքեր, պերճանքի առարկաներ, հայելիներ և այլն), երրորդում խեցեղենի ձևերի ու դրանց զարդերի բնորոշ տեսակները, չորրորդում՝ դամբարանների բաշխվածությունը ըստ հատկանիշների քանակի: Պարզվել է, որ առանձնացված 40 հատկանիշներից, յուրաքանչյուր դամբանում միջինում առկա է մոտավորապես յոթը: Բնորոշ այդ գույքն են՝ ձիասարքի, զենք-զրահի որոշ տիպեր, նույնը և պերճանքի առարկաները, մետաղից, քարից ու փայտից պատրաստված տարատեսակ ամանեղեն, «սկյութական» ոճի կնիքներ, ծիսական անոթներ, կախօղակով սրոցաքարեր, շիգղեր: Հեղինակի կարծիքով, շրջանառվող այն տեսակետը, թե սկյութների և տեղի բնակչության միջև «միանգամայն խաղաղ հարաբերություններ են եղել» վերանայման կարիք ունի (էջ 182):

Ատենախոսության չորրորդ գլուխը նվիրված է «հնագիտական տարաբնույթ տվյալների» քննությանը. Այն կազմված է երեք բաժնից: Առաջինում տեղեկություններ են տրված հիմնական ցուցակում տեղ չգտած, որոշակի համալիրի չվերագրված այն համախումբ դամբարանների վերաբերյալ, որոնք ունեն կիմերա-սկյութական մշակութային ընդհանրությանը բնորոշ հատկանիշներ: Երկրորդում քննվում են բնակավայրերում կիմերա-սկյութական մշակութային ընդհանրության հատկանիշներով համալիրներն ու դրանց թվագրության խնդիրները: Առանձնացված 33 հատկանիշից առնվազն 6-ը (որից մեկը՝ «բնորոշ». կիսագետնափոր կամ աղեղնաձև պատով կացարան, որն ունի առանձնացված հարթակ, առկա է

մարդակերպ կամ ֆալաձև կոթող, կիմերա-սկյութական նյութեր) պետք է առկա լինի բնակավայրում, ուր հարկ է առանձնացնել տեղական (հին հայկական) և բերովի մշակույթները: Երրորդ բաժնում քննվում են բնակավայրերի պեղումներով կամ պատահաբար հայտնաբերված նյութերը. դրանց տարածվածությունը ցույց է տալիս, որ կիմերական կամ սկյութական զորաջոկատները սակավաթիվ չեն եղել (էջ 212-213) ու գտնվել են զարգացման ավելի ցածր մակարդակի վրա, քան բնիկները:

Աշխատության վերջին՝ հինգերորդ գլխում քննվում են հայկական և կիմերական ու սկյութական «լեզվաբանական և առասպելաբանական որոշ ընդհանրություններ»: Երկու մասից կազմված այս գլխի առաջին բաժնում ատենախոսը ներկայացնում է մեզ հասած կիմերական երեք անձնանուն, մեկ հասարակ և կիմերական ցեղախմբի անունն ու դրանով կազմված հատուկ անունները: Ենթադրվում է, որ դրանք են արգիլը (= ստորգետնյա կացարան), որից և Հայաստանի Արգել, Արգիալ գյուղանունները, երկնքի ոլորտներից Կիմերական կոչվածը, սկյութերենի baxta-ն հայերենի «բախտ» զուգահեռով, kuti-շունը՝ քութի/կուտիկ-շան ձագ զուգահեռով, bāzu-ձեռք, ուս, որից և բազուկն ու Բազուկ անձնանունը, ս/շիրակ ցեղանունը «Շիրակ» գավառի, Նոր Շիրականը Պարսկահայքում, ինչպես և սկյութական «գոգ» ցեղախմբից՝ Գոգասուն, Գոգարան անվանումները և այլն (ենթադրվում է, որ այս ցեղի առաջնորդը Իշպակա-Սկայորդի-Շագայորդին կարող էր լինել):

Հայ-սկյութական փոխառնչությունների առումով, իբրև մշակութային-պատմական տեղեկատվության աղբյուր, կարևորվում է և առասպելաբանությունը, որը և քննվում է երկրորդ՝ «դիցաբանական ընդհանրություններ» ենթավերնագիրը կրող բաժնում: Այստեղ ատենախոսը փորձում է պարզել հայկական դիցաբանության մեջ և սկյութական առասպելներում առկա նմանություններն ու ընդհանրությունները: Հետազոտողի ուշադրությունը առաջին հերթին գրավում է հույն հեղինակների այն վկայությունը, որ սկյութների նախահայրը Տարգիտաոս է կոչվել. այդ անվան նմանությունը Թորգոմի և նրա կրկնակ Թարգամոսի հետ, հազիվ թե պատահականություն հանդիսանա: Ուշադրություն է գրավում նաև Արա Գեղեցիկի՝ երկնքից ընկած հավլունի թրի և ամպրոպային հերոս Բատրազի թրի, թշնամիներին ինքնուրույն կոտորելու գործառույթի նմանությունը: Նշվում է նաև նարտական էպոսի Ձեռասայի և Ծովինարի միջև դիտված ծագումնաբանական մերձավորությունը, իսկ օսերը, ալան նախնիներով միջնորդավորված, համարվում են սկյութական ցեղերի ժառանգորդները.

համարվում է, որ օսերենը սկյութերենի անմիջական շարունակությունն է: Ատենախոսի նշած փաստական նյութը ցույց է տալիս հայերենում սկյութ-օսական շերտի առկայությունը և այլն:

Եզրակացություններում հանրագումարի բերված հետազոտությունների արդյունքներից հետևում է, որ մթա. VIII դարի վերջ – VI դ. հնագիտական մշակույթների շարքում եղել է կիմերա-սկյութական մշակութային ընդհանրություն, որն առայժմ ներկայացված է 144 դամբանային համալիրներով, 60 դամբանախմբով: Այս հուշարձանների սկյութական թաղման ծեսի հետ ունեցած առնչվածությունն են հուշում մարդակերպ կոթողները, մեջքի պառկեցված, ձգված դիրքով կմախքները, տաշտաձև դիակալները, իջեցված կամ ներթող թաղումները, ձիու և ձիասարքի տեղադրումը, մարդու, շան և գայլի զոհաբերումը, թաղվածին ուղեկցող կիմերա-սկյութական նյութերը: Մետաղե արտադրանքը, խեցեղենի ձևերը, զարդաբանվածքը և այլ հատկանիշներ կարող են ցույց տալ կատարված մշակութային փոփոխությունները, իսկ բնակատեղիների ուսումնասիրություններից բխած արդյունքների համադրումը դամբանադաշտերի հետ, թույլ կտա խոսել մշակութային փոխառնչությունների մասին:

Հնագիտական նյութերի քննությամբ ստացված արդյքունքները լրացվում են լեզվական, տեղանվանական և դիցաբանական ընդհանրությունների առկայությամբ: Առկա տվյալների համակողմանի ուսումնասիրությամբ հիմնավորված արդյունքները թույլ տալով առանձնացնել, ատենախոսի կողմից շրջանառության մեջ դրված «կիմերա-սկյութական մշակութային ընդհանրություն» եզրույթը, վկայում են, որ հին հայկական մշակույթի կազմավորման գործում իր նպաստն է ունեցել նաև մշակութային երրորդ տարրը և այն տեսակետը, թե լեռնաշխարհ ներխուժած քոչվորների զորաջոկատները լուրջ ազդեցություն չեն գործել կազմավորված հայկական մշակույթի վրա, հարկ է վերանայել, հաշվի առնելով լեռնաշխարհի բուռն իրադարձությունների վրա խոր կնիք թողած հին հայկական մծշակույթի սկզբնավորումը ազդարարող, հնարավորինս բոլոր տվյալները: Տեղին է նշել, որ քննության արդյունքների ու դրանցով հիմնավորված հետևությունների մի մասն արդեն իսկ արտացոլվել է գիտական հանդեսներում, տարբեր լեզուներով (հայերեն, ռուսերեն, անգլերեն) հրատարակված, թվով 21 աշխատանքում:

Այժմ մասնավոր հարցերի վերաբերյալ առանձին դիտողություններ:

Այսպես, ժխտելով սկյութական ցեղախմբերի և Հայկական լեռնաշխարհի բնիկների միջև «միանգամայն խաղաղ հարաբերություններ» ստեղծված լինելու կարծիքը (էջ 17, 182), ատենախոսը իբրև ապացույց, մատնանշում է հակառակը

պնդող Հերոդոտոսի վկայությունները (Հերոդոտոս, I. 106)։ Վերջիններիս համաձայն, սկյութները 28 տարի տիրելով Ասիայում, կողոպուտով և հարկերով կործանման եզրին հասցրին երկիրը, ամայացնելով այն։ Ընդունելով ատենախոսի դիտողության իրավացիությունը, տեղին է հիշատակել և պատմահոր մեկ այլ վկայություն, համաձայն որի խռովարար սկյութ-քոչվորների հորդան բնակության վայր է խնդրում մեդացիների թագավոր Կիաքսարից։ Վերջինս բարեկամաբար է ընդունում նրանց և նույնիսկ իր որդիներին սկյութների մոտ է ուղարկում նետաձգություն սովորելու։ Այնուհետև խոսվում է նրա որդիներից մեկի սպանության, սկյութների փախուստի, մեդա-լիդիական պատերազմի մասին և այլն (Հերոդոտոս, I. 73)։ Այստեղ երկիրը ամայացնելու մասին խոսք չկա։ Ընդհակառակը՝ Յա. Հումմելի, Ա.Ա. Իվանովսկու և այլ հետազոտողների կողմից Գանձակում և այլուր կատարված պեղումների արդյունքները ցույց են տալիս, որ իրոք խաղաղ հարաբերություններ են եղել (Յա. Հումմելի «ընտանեկան» դամբանախմբերը)։ Դամբաններում սովորական են կոպիտ, մակերեսի խազված-քազարդ պատկերները սպիտակ նյութով ընդելուզված խեցանոթներն ու տեղական արտադրանքը, հաճախ են հանդիպում և նույն դամբանախցում մեջքի պառկեցված և կծկած, կողքի պառկեցված կմախքները։ Բավական պահպանողական տեսք ունեցող սպիտակ ընդելուզումով այդ խեցանոթները, ուշ թվագրություն ունեցող այլևայլ նյութերի հետ, նույնպես առկա են տարածքում և հարևան այլ շրջաններում։ Այս կապակցությամբ կարևորվում են Արևելյան Վրաստանում, մասնավորապես Կախեթում կատարված պեղումների արդյունքները. մի շարք հուշարձաններում (Քվեմո-Քեդի, Մելիգելե I սրբարան, Զեմո Բոդբե, Մոչրիլի-գորա B շերտ, Մելաանիի սրբարան, Իկալտո, Արուշենտա և այլն), կրկին հանդես է գալիս սպիտակ ընդելուզումով խեցեղենը, որն այդ ուշ հուշարձաններում ուղեկցվում է հրդեհներով և ավերածություններով։ Նույն պատկերը դիտվում է Ցխինվալիում, Կասպիում, Սամտավրոյում, տարբերությամբ, որ հիշատակված հուշարձաններում կյանքը ավելի վաղ է կանգ առել (Пицхелаури К.Н., Основные проблемы истории племен Восточной Грузии (XV-VII вв. до н.э.), Тб., 1973, աղ. V, XVIII, XXVIII, XXXVI, վրացերեն, իսկ պգդ. աստիճանի հայցման համար սեղմագիրը ռուսերենով է)։ Սկյութական թաղումներ են պեղված և Խաշուրիում։ Հուշարձանների այս շղթան ցույց է տալիս, որ քոչվորների տեղաշարժերի համար Դարիալի կիրճը (Ալանաց դուռ), հնարավոր է և Ալագիրը (Մամիսոնի լեռնանցք), մեծ դեր են կատարել, ինչը, համաձայնվելով ատենախոսի հետ, չի կարելի ասել Մեոտիս-կոլխիդյան ճանապարհի վերաբերյալ։

Համերաշխվելով ատենախոսի և այլ հետազոտողների հետ, կարելի է ասել, որ երթուղիներից մյուսը Դերբենդի անցքով (Ճորա պահակ) անցած լինի (էջ 48-49): Կրկնվող այդ տեղաշարժերի ուղու վրա գտնվող Կախեթի Պատարա Շիրակ կոչվող հատվածի անունը հուշող նշանակություն ունի: Չծանրանալով պատմահնագիտական տվյալների վրա, կարծում եմ իրավացի կլինի նշել , որ առանձին տարածքներ, ցեղակցական և դաշնակցային կապերի պատճառով, կարող էին զերծ մնացած լինել այդ ավերածություններից (օր. Շակաշենը, Մաննան և այլն): Այս պահը մերժվում է Հերոդոտոսի վկայությամբ, որի մյուս ծայրահեղությունը «միանգամայն խաղաղ հարաբերություններ հաստատված լինելու միտքն է»:

Շփոթության տեղիք կարող է տալ և Ա. Իվանչիկի աշխատությանը հղված միակողմանիությունը (Иванчик А., Современное состояние киммерийской проблемы. Итогои дискуссии, ВДИ, № 2, 1999). այդտեղ Ա. Իվանչիկը նշում է «կիմմերական» մշակույթի ծագումնաբանական կապը «սրուբնայա» անվանվող մշակույթի հետ: Ատենախոսը այնուհետև շարունակում է (էջ 52 «… պայմանականորեն «կիմերական մշակույթը» անվանում են հյուսիսմերձսևծովյան նախասկյութական մշակույթը»: Այս դեպքում տեղին կլիներ ավելացնել և Բ. Ա. Շրամկոյի այն ձևակերպումը, ըստ որի «սկյութական մշակույթը ձևավորվել է Արևելյան Եվրոպայի հարավում, կիմմերական դարաշրջանին նախորդող շրջանում…» («սրուբնայա» կոչվող մշակույթը էնեոլիթյան է) (մանրամասները տես՝ Степи европейской части СССР в скифо-сарматское время, Археология СССР, т. X, 1989, с. 53-64):

Կարելի է նշել և սակավաթիվ օտարահունչ բառերի (կոնկրետ, անալոգիա, արտեֆակտ և այլն), իսկ մեկ դեպքում և սխալ թարգմանության հանգեցնող Սարի-թեփե անվանումը, որը պետք է լինի Սարը-թեփե = Դեղին բլուր (այն շեշտված է Ջ. Խալիլովի և Ի. Գ. Նարիմանովի կողմից):

Ամփոփենք: Ներկայացված աշխատանքի նորույթը ոչ միայն Հայկական լեռնաշխարհի մշակույթների շարքում կիմերա-սկյութական ընդհանրության ունեցած տեղի և դերի պարզաբանման, գրեթե չլուսաբանված հիմնախնդրի պարզաբանելուն միտված նպատակն է, այլև առկա նյութի նկատմամբ դրսևորած մոտեցումն ու իմաստավորումը: Թեմայի քննությանը նվիրված առաջին ընդհանրացնող բնույթի ուսումնասիրություն հանդիսացող աշխատանքի դրույթները չհավակնելով վերջնական լինելուն, անտարակույս խորացնում են մեր պատկերացումներն ու գիտելիքները հայոց պատմության մթա. VIII դարի վերջ –

VI դ. երրորդ քառորդն ընկած պատմական իրավիճակը առավել խորությամբ ընկալելուն, կիմերա-սկյութական բաղադրատարրի կատարած դերը հստակեցնելուն: Շարադրանքին միահյուսվող առաջարկված լրացումները, հաստատելով ատենախոսի դրույթները, դյուրին է ներմուծել կատարված աշխատանքի էջերում, աշխատանք, որի գիտական արժեքը անուրանալի է: Հիմք ընդունելով տքնաջան աշխատանքի արդյունք հանդիսացող ատենախոսության արժանիքները, միջնորդում եմ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտին առընթեր գործող դոկտորի գիտական աստիճան շնորհող (007) Մասնագիտական խորհրդի առաջ Գարեգին Սահակի Թումանյանին շնորհել պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան, ինչին նա լիովին արժանի է:

Պաշտոնական ընդդիմախոս

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պատմական գիտ. դոկտոր Օ. Ս. Խնկիկյան

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների դոկտոր Օ. Ս. Խնկիկյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի փոխտնօրեն գիտության գծով, պատմական գիտությունների թեկնածու Ա. Ա. Բոբոխյան

07. 06. 2021 թ.